ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2025 թվականի փետրվարի 28-ի որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը «ԱՎՆ ՄՆԿ -ԳՀԱՊՁԲ-2025/05»

«Ավանի մսուր-մանկապարտեզներ» ՀՈԱԿ-ի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգով տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԱՎՆ ՄՆԿ-ԳՀԱՊՁԲ-2025/05» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2025 թվականի փետրվարի 27-ին և փետրվարի 28-ին ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 2025 թվականի փետրվարի 27-ին և փետրվարի 28-ին տրամադրված պարզաբանումները՝

Հարցադրումներ N 1

Խնդրում եմ տրամադրել 2-րդ չափաբաժնում նշված անձեռոցիկի չափը և հստակեցնել տուփի որակական բնութագրիչը՝ մասնավորապես պոլիէթիլենային տուփով, թե ստվարաթղթե:

Պարզաբանում N 1

Անձեռոցիկի չափը՝ առնվազը 200x185մմ և տուփի որակական բնութագրիչը՝ պոլիէթիլենային տուփով:

Հարցադրումներ N 2

1. 1-ին չափաբաժանում նշված է թվով երկու ֆիրմային անվանում, սակայն այդ ապրանքը ունի այլ արտադրողներ նույնպես, արդյոք սահմանափակվում է միայն այդ երկու ֆիրմաներով:

2. 2-րդ չափաբաժնում նշված է թվով երկու ֆիրմային անվանում, սակայն այդ ապրանքը ունի այլ արտադրողներ նույնպես, արդյոք սահմանափակվում է միայն այդ երկու ֆիրմաներով: Միևնույն ժամանակ նշված քանակով անձեռոցիկներ կարող են լինել միայն պոլիէթիլենային թաղանթով պատված տուփերով, արդյոք Ձեր նշված տուփը չի վերաբերվում ստվարաթղթե տուփերին:

3. Վերոնշյալ չափաբաժինների մասով արդյոք չի սահմանափակվում հնարավոր մասնակիցների քանակը և մասնակցության իրավունքը:

Պարզաբանում N 2

Ոչ, չի սահմանափակվում հնարավոր մասնակիցների քանակը և մասնակցության իրավունքը: ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ՝ բացառությամբ սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով և նույն կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերությամբ նախատեսված՝ պատվիրատուի ղեկավարի հետ համաձայնեցված դեպքերում կատարվող գնումների: Ապրանքների գնման դեպքում հղումներ օգտագործելիս ներկայացվում են որպես համարժեք առաջարկվող ապրանքների ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրողը:

Հարցադրումներ N 3

Խնդրում ենք տալ պարզաբանում հայտրարարության մեջ ներառված «Հեղուկ օճառ/CPV-39831245/» և «Հատակի մաքրման նյութեր/ CPV-39831273» ապրանքների տեխնիկական բնութագրեր բաժնում բացակայող տարայի տարողության մասին:

Պարզաբանում N 3

Հեղուկ օճառը անհրաժեշտ է ներկայացնել 5լ տարաներով, իսկ հատակի մաքրման նյութերը՝ 3 կամ 5լ-ոց տարաներով:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԱՎՆ ՄՆԿ -ԳՀԱՊՁԲ-2025/05» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Աիդա Այվազյանին:

Հեռախոս +374 99 04 12 92,
Էլ. փոստ legesgnumner@gmail.com
Պատվիրատու՝ **«Ավանի մսուր-մանկապարտեզներ» ՀՈԱԿ**